

XVII ԴԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ
ՔՅԱԹԻՐ ՁԵԼԵՐԻՆ ԵՎ ԷՎԼԻՅԱ ՁԵԼԵՐԻՆ

XVII դարի թուրքական պատմագրության և աշխարհագրության ականավոր ներկայացուցիչներ Քյաթիր Ձելերին և Էվլիյա Ձելերին իրենց երկերում շափազանց հարուստ նյութ են տալիս Մերձավոր արևելքի (Փոքր Ասիա, Միջագետք, Սիրիա, Պաղեստին, Արարիա, Եգիպտոս), Հարավային, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրների վերաբերյալ:

Այս հոգվածում փորձ է արվում որոշ տեղեկություններ հաղորդել այդ պատմագիրների կյանքի և գործունեության վերաբերյալ և տալ նրանց թողած ժառանգության համառոտ բնութագիրը:

Քյաթիր Ձելերին¹ ծնվել է Ստամբուլում 1017 թ. (1609) զինվորականի ընտանիքում: Նրա իսկական անունը էլհաջ Մուստաֆա իբն-Արդուլլահ է, սակայն թուրքական գրականության մեջ նա հայտնի է Քյաթիր Ձելերի, իսկ եվրոպական գրականության մեջ՝ Հաջի Խալիֆա (կամ Կալֆա) անուններով: Քյաթիր Ձելերին երկար ժամանակ զբաղեցրել է զինվորական և գրասենյակային տշ բարձր պաշտոններ, որի համար էլ ստացել է Հաջի Խալիֆա կամ Կալֆա մականունը²:

¹ Հայ պատմագրության մեջ միայն Լեոն է, որ հիշատակում է Քյաթիր Ձելերի մասին. նա իր «Հայոց պատմության» մեջ գրում է. «Հռչակված թուրք հեղինակներից կհիշատակենք այստեղ մեկին, որ շատ բեղմնավոր գրիչ է ունեցել, դա Մուստաֆա իբն-Արդուլլահն է, ավելի հայտնի Հաջի Կուլի կամ Քյաթիր Ձելերի կեղծանուններով. նրա բազմաթիվ աշխատությունների մեջ գնահատելի է «Ջիհան Նյումա» (Աշխարհի հայելի) անունով ընդարձակ աշխատությունը (Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1948, էջ 101):

² Խալիֆա կամ Կալֆա էին կոչվում պետական գրասենյակներում քարտուղարի պաշտոն վարողները:

Ձինվորական պաշտոնի բերումով Քյաթիր Չելերին մասնակցել է Բաղդադի 1035 թվականի (1626) արշավանքին, իսկ 1036 թ. Աբազա փաշայի ապստամբության ժամանակ՝ էրզրումի պաշարմանը, Թուրք-իրանական պատերազմի տարիներին (1043—1045, 1633—1635) նա Առվթան Մուրադ 4-րդի գլխավորած զորքի հետ լինում է Համադանում ու Բաղդադում, իսկ 1044 թ. (1635) մասնակցում Երևանի բերդի պաշարմանը։ Սիրիայում եղած ժամանակ նա ուխտի է գնում Մեքքա (Հաջջ) և ստանում Հաջջ տիտղոսը։ Չնայած պաշտոնական ծառայություններով զբաղված լինելուն, Քյաթիր Չելերին միշտ ձգտել է սովորել և հարստացնել իր գիտելիքները։ Արաբական կուլտուրայի կարևոր կենտրոններից մեկում, Հալեպում եղած ժամանակ, նա մոտիկից ծանոթացել է ժամանակի գիտնականների հետ, ուսումնասիրել գիտական բազմաթիվ աղբյուրներ։

Որոշ ժամանակ անց, Քյաթիր Չելերին թողել է իր զինվորական ծառայությունը և ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի։ Տասնյակ տարիներ շարունակ նա մեծ ջանասիրությամբ ուսումնասիրել է զանազան գիտություններ, իսլամական շարիաթի տեմունքը, տրամաբանություն, քերականություն, մաթեմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն, բժշկական գիտություններ և այլն։ Կարճ ժամանակում Քյաթիր Չելերին հմտանում է նաև ֆինանսական հարցերում և 1063 թվականին (1652) Թուրքիայի կառավարության է ներկայացնում պետական բյուջեի բարելավման վերաբերյալ հանգամանալից մի ղեկուցում։ Վերջինս, հետագայում թարգմանվեց գերմաներեն։ 1863 թվականին թուրք գրող Ահմեդ Վեֆիքը այն տպագրեց նաև թուրքերեն լեզվով։

Քյաթիր Չելերին մինչև կյանքի վերջը իր բոլոր ուժերն ու գիտելիքները նվիրաբերեց հայրենի երկրի և ժողովրդի կուլտուրայի հարստացման գործին։ Նա մահացել է անժամանակ, իր գիտական աշխատությունները չավարտած, հավանաբար 1067 կամ 1068 թվականին (1657—1658), մոտ 50 տարեկան հասակում։ Ենթադրվում է, որ նա զոհ է գնացել դժբախտ պատահարի կամ հանկարծամահ է եղել։

Քյաթիր Չելերիի բազմաթիվ գիտական աշխատություններից առավել կարևորը հետևյալներն են.

Պատմագրական աշխատություններ — «Թափվիմ-ու-թե-երիլ»¹, ինքնատիպ և արժեքավոր ուսումնասիրություն է։ «Օսման-

¹ تَؤِیْمُ الْوَارِثِ «Պատմությունների տարեցույց»։

յան կայսրության պատմությունն» բազմահատոր աշխատության հեղինակը՝ Համմերն այս երկի մասին ասել է. «Եթե օսմանյան պատմության մասին Քյաթիր Չելեբիի աշխատությունը չլիներ, այս պատմությունը շատ դեպքերում խավարի մեջ պետի մնալ»¹։ «Ֆեզլեֆե»-ն² օսմանյան պետության երկհատոր պատմությունն է, որն ընդգրկում է XVI դարի վերջից XVII դարի առաջին կեսն ընկած ժամանակաշրջանը։ Հեղինակն ականատես է եղել երկրորդ հատորում նկարագրված դեպքերին։ «Ֆեզլեֆեն» անգնահատելի սկզբնաղբյուր է Թուրքիան ուսումնասիրողների համար, քանի որ հեղինակը դեպքերը շարադրում է ճշգրիտ ու հանգամանորեն։

«Քյաթիր Չելեբին, պատմագիր Սելանիկիից հետո, ամենից ավելի ամբողջական և մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ ժամանակաշրջանի մասին։ Քյաթիր Չելեբիի հեղինակությունն անվիճելի է Թուրքիայի բոլոր պատմագիրների համար և նրա—այս աշխատությունը Թուրքիայի XVI դարի վերջի և XVII դարի առաջին կեսի պատմագրության ամենահարուստ աղբյուրներից մեկն է»³։

«Քեշֆ-ուլ-Ջունուն»⁴ եվրոպական գրականության մեջ գնահատվում է իրրե ընդարձակ, արժեքավոր մատենագիտական երկասիրություն, որտեղ ամփոփ տեղեկություններ են տրված գիտության մոտ 300 ճյուղերի մասին։ Քյաթիր Չելեբիի այս աշխատությունը հատկապես նշանակալից է Արևելքով և արևելագիտությունում զբաղվողների համար։

«Միզան-ուլ-հակկ» և «Դյուսքուր-ուլ-ամել»⁵ աշխատություններում Չելեբին անդրադարձել է իր ժամանակի հասարակական երևույթներին ու դեպքերին, պայքարել կրոնական մոլեռանդության դեմ։

Աշխարհագրական աշխատություններ. «Թունֆաթ-ալ-ֆիքար ֆի Լսֆաթ-ուլ-բիհար»⁶։

¹ Hammer J. Histoire de l'Empire Ottoman, I—XVIII, Paris, 1835—1843 (Քրանսերեն թարգմանություն)։

² کشف‌الظنون պատմություն։

³ А. Тверитинова, Восстания Кара Языджи, Дели Хасана в Турции, М., 1946, стр. 17—18.

⁴ «Գարծիբների հայտ»-کشف الظنومه عید اسمی الکتب و آفتون նություն, գրքերի և գիտությունների անունների մասին։

⁵ میزان الحق، دستورالعمل «Իրավունքի չափը», «Դործի ուղեցույցը»։

⁶ أسفار البحار تحفة الکبار فی اسفار البحار «Նվեր ծովային արշավանքների մեծավորներին»։

Այս ուսումնասիրության մեջ Քյաթիր Չելերին խոսում է օսմանյան թուրքերի ծովային նավատորմի, դրա արշավների և հաղթանակների, թուրքիայի ավերը ողողող ծովերում կատարված ղեպքերի, ծովային մարտերի հայտնի հերոսներ խայրեդդին Բարբարոսի, Փիրի Ռեիսի և այլոց մասին: Երկն ունի պատմական բնույթ, աշխարհագրական գունավորումով: Հետաքրքրական, կենդանի բովանդակության և հայրենասիրական բնույթի շնորհիվ այն արագ ժողովրդականություն շահեց թե՛ Ստամբուլում և թե՛ Եվրոպայում: 1141 թվականին (1729) գիրքը տպագրվեց Իբրահիմ Մյուլիսիզադեի տպարանում¹, հիանալի տեխնիկայով, քարտեզներով և նկարներով: Այն թարգմանվել է նաև անգլերեն:

«Ջիհան Նյումա»², Քյաթիր Չելերիի այս արժեքավոր աշխատությունը XVII դարում թուրքերեն գրված առաջին աշխարհագրությունն է³, Գիրքը բաղկացած է 700 մեծագիր էջից, որից 150-ը հատկացված է աշխարհագրական ընդհանուր հարցերի լուսաբանմանը: Հեղինակը նշում է, որ իբրև աղբյուր նկատի է տանցել իսլամական աշխարհագրության բազմաթիվ գրքեր և լատիներեն ու եվրոպական լեզուներով մի քանի աշխատություններ, աշխարհագրական ատլասներ (օր. Atlas Minoe): «Ջիհան Նյումա»-ում հեղինակը խոսում է աշխարհագրության բովանդակության և կարևորության, երկրի գնդաձևության մասին, շեշտելով, որ «Երկրի գնդաձևությունը չի հակասում իսլամական Շարիաթին»: Գրքում լայն տեղեկություններ են տրված նաև մաթեմատիկական աշխարհագրության, երկրի շարժումների, աստիճանացանցի, բևեռների, մասշտաբի, ծովը ու ցամաքի բաժանման և այլնի մասին: Քյաթիր Չելերին նշում է, որ մինչև XVII դարը, աշխարհագրությունների և ատլասների հեղինակները, որոնք բացառապես եվրոպացիներ են եղել, իրենց ուսումնասիրություններում հիմնական ուշադրությունը դարձրել են Եվրոպայի աշխարհագրության վրա, իսկ Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի մասին խոսել են խիստ համառոտակի: «Այս գրքում (Ջիհան Նյումա-ում—Ա. Ս:) մենք այլ ուղղության հետևեցինք, նախապես սկսելով Ասիայի

¹ Թուրքիայում առաջին թուրքական տպարանը հիմնել է ազգությամբ հունգար Իբրահիմ Մյուլիսիզադեի, 1140 թվականին (1727), այսինքն տպագրության գյուտից մոտ երեք տար հետո:

² جهان نما «Աշխարհի հայելին», աշխարհագրություն:

³ Քյաթիր Չելերիի «Ջիհան Նյուման» հայերեն է թարգմանել Երեմիա Չելերի-Քեմալուքչյանը, որը, սակայն, ցավոք սրտի, մինչև օրս չի տպագրվել:

արևելքից, հետո անցանք Աֆրիկային, Եվրոպային և Ամերիկային»¹։

«Ջիհան նյումայի» երկրորդ խմբագրության գործում Քյաթիր Չելեբիին օգնել է նախկինում ֆրանսիացի վարդապետ, հետագայում իսլամոթյուն ընդունած Շեյխ Մեհմեդ Իխլասին։

«Ջիհան նյուման» տպագրվել է 1145 (1732) թվականին Իբրահիմ Մյութեֆեբիկայի տպարանում։

Սովետական և եվրոպական արևելագետները և թուրքաբանները, բազմակողմանիորեն ուսումնասիրելով Չելեբիի աշխատությունները, մասնավորապես, նրա «Ջիհան նյուման», իրենց կարծիքն են արտահայտել դրանց վերաբերյալ։

Հիշենք դրանցից մի քանիսը։

Քյաթիր Չելեբիի և էվլիյա Չելեբիի մասին սովետական, ակադեմիկոս արևելագետ-ակադեմիկոս Ի. Կրաչկովսկու արժեքավոր ուսումնասիրությունները և հայտնի արևելագետների ու թուրքագետների եզրակացություններն ամփոփված են նրա ընտիր երկերի 4-րդ հատորի «XV—XIX դարերի թուրքական աշխարհագրական դրականությունը» վերնագրով գլխում²։ Ի. Կրաչկովսկին Քյաթիր Չելեբիի աշխատություններին տալիս է հետևյալ գնահատականը. «Եվրոպական գրականության մեջ դրանք (Ք. Չելեբիի երկերը—Ս. Ս.) գնահատված են արժանի չափով և մենք համարձակորեն կարող ենք ասել, որ Հաջի-Խալիֆան [Քյաթիր Չելեբին] իր արժանիքներով հայտնի է իբրև Մերձավոր արևելքի XVII դարի ամենամեծ աշխարհագրագետ»³։

Ակադեմիկոս Վ. Բարթոլդն իր «Մուսուլմանության կուլտուրան» հայտնի աշխատության մեջ Քյաթիր Չելեբիի աշխատությունները գնահատում է այն տեսակետից, որ նա առաջինն է փորձել եվրոպական գիտությունների տվյալները համեմատել իսլամական գիտության տվյալների հետ (մինչև Քյաթիր Չելեբին եվրոպական գրականության մեջ այդպիսի փորձ չէր եղել)⁴։

Քյաթիր Չելեբիի և էվլիյա Չելեբիի աշխատությունների ուսումնասիրությամբ զբաղվել են նաև եվրոպացի արևելագետներ Մորգոթմանը, Բարինգերը, Թեշները, Հարթմանը, Համմերը և ուրիշներ։

¹ کاتب چلبی، جہان نما، ص ۱۲۲

² Академик И. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, Турецкая географическая литература XV—XIX вв.

³ Крачковский, стр. 624.

⁴ В. В. Бартольд, Культура мусульманства, 1918, стр. 104.

Քյաթիր Չելեբիին և նրա աշխատություններին անդրադարձել են նաև ժամանակակից թուրք պատմաբանները: Պատմաբան Ի. Դանիշմենդը Քյաթիր Չելեբիին բնորոշում է որպես թուրքական դրականության առաջ արևմտյան կուլտուրայի դուռը բացողի:

«Թարիհ»-ը Քյաթիր Չելեբիին համարում է իր ժամանակի բոլոր դիտություններին ծանոթ անձնավորություն: «Այդ դարաշրջանում Արևելքի համար Արևմուտքի գրականությունից օգտվելու անհրաժեշտություն էր առաջացել»¹:

Ժամանակակից հայտնի թուրք պատմաբան Ի. Ուզունչարչլին իր «Օսմանլի Թարիհի»-ում բավական ընդարձակ տեղեկություններ է տալիս Քյաթիր Չելեբիի կենսագրության և գիտական գործունեության մասին, միաժամանակ նշելով, որ նա ունեցել է չպահպանված աշխատություններ («Ստամբուլի պատմությունը», «Թարիհի ֆրենգի» անունով պատմությունը և այլն)²:

Քյաթիր Չելեբիի գիտական աշխատությունների մասին ավելի մանրամասն տեղեկություններ կան Բուրսալի Թահիր Բեյի «Օսմանցի հեղինակները» (Osmanlı Müellifleri) աշխատության մեջ:

Մի քանի թուրք պատմագիրներ նշում են, որ Քյաթիր Չելեբիին, չնայած թուրքական կուլտուրայի զարգացման ուղղությամբ կատարած խիստ բեղմնավոր աշխատանքին, իր «հասարակ ծագման» պատճառով «բարձր աստիճանի» չի արժանացել: Տարակույս չկա, որ Քյաթիր Չելեբիի հասարակ ծագումը և բարձր աստիճանների չհասնելը երբեք էլ արգելք չեն եղել, որ նա իր ամբողջ ժամանակը և ուժերը նվիրի գիտական աշխատանքին:

1957 թվականին, Քյաթիր Չելեբիի մահվան 300 ամյակի կապակցությամբ «Թուրքական պատմության էնկերության (Türk Tarih Kurumu) և պետական համալսարանի նախաձեռնությամբ, նրա հիշատակին հոբելանական հանդես կազմակերպվեց: Քյաթիր Չելեբիի մասին մամուլում լույս տեսան հոդվածներ, կարգացվեցին գիտական զեկուցումներ: «Ջումհուրիյեթ» թերթի 1957 թ. հուլիսի 25-ի համարում Մ. Թայիր Գյուկբիլգինը առաջարկեց պատրաստել և հրատարակել Քյաթիր Չելեբիի նրկերի լիակատար ժողովածուն («Kâtib Çelebi külliyyatı»)³:

¹ Tarih, c. III, Yeni ve yakın zamanlar, s. 120.

² J. H. Uzunçarşılı, Osmanlı Tarihi, c. III, bölüm II, Ankara, 1954, s. 539.

³ «Cümhuriyet», 26 Temmuz, 1957.

* * *

XVII դարի թուրք ճանապարհորդ էվլիյա Չելեբիին հաճախ անվանում են նաև թուրքական Իրն-Քաթութա, կամ «Աշխարհաշըր-շիկ»¹:

Էվլիյա Չելեբիի կենսագրության մասին պահպանվել են շատ սահմանափակ տեղեկություններ: Նա իր «Ուղեգրության» մեջ տալիս է որոշ կենսագրական տեղեկություններ: Մնվել է 1020 թվականին (1611) Կոստանդնուպոլսում, նրա անունը էվլիյա էր, հետագայում ղուրանը անգիր անելու (Հաֆըզ) և իր պապերի սուլթանական արքունիքի հետ ունեցած կապի պատճառով ստացավ Չելեբի պատվավոր անունը, կոչվելով Հաֆըզ էվլիյա Չելեբի: Նրա հայրը՝ Դերվիշ Մեհմեդ Զելլին, Կանունի սուլթան Սուլեյմանի մոտ ծառայում էր իբրև նեղիմ (զրուցակից) և ոսկերչապետ (կոչում՝ շիբաշը): Էվլիյայի նախահայրերը եկել են Միշին Ասիայից և ապրել Քեոթահիայում ու Բաղդադում և միայն Կոստանդնուպոլսի գրավումից հետո փոխադրվել այդտեղ²: Մայրը ծագումով Կովկասյան աբաղա³ ցեղից էր և ազգակցական կապ ունեւր այդ ժամանակի մեծ վեզիր և պետական գործիչ Մելեք Ահմեդ փաշայի հետ:

Էվլիյա Չելեբին նախնական կրթությունը ստացել է իր ապրած քաղաքում, հետո շարունակել է սովորել Շելիս-ու-Իսլամ Համիդ էֆենդիի մեդրեսեում: 1045 թվականին (1636) Այա-Սոֆիայում կատարել է հաֆըզի պաշտոն և սուլթան Մուրադ 4-րդը այդ կապակցությամբ նրան իբրև մյուհասիբ (զրուցակից) է վերցրել իր արքունիքը: Էվլ. Չելեբին մեծ հակում և ընդունակություն է ունեցել դեպի երգն ու երաժշտությունը, որին շատ է նպաստել նրա գեղեցիկ և հրապուրիչ ձայնը: Թե արքունիքում և թե դրսում նա սերտ կապ է պահպանել ժամանակի հայտնի երաժիշտների հետ, զարգացրել իր երաժշտական ձիրքը: Նա զբաղվել է նաև գեղագրությամբ ու նկարչությամբ: Նա առանձնապես սիրել է նաև ճարտարապետությունն ու երկրաչափությունը, որն ակնհայտորեն երևում

¹ سیاح عالم

² Cafer Erkölc, Evliya Çelebi, hayatı, san'atı, eserleri. Türk klasiikleri, № 34, Ankara, 1954.

³ Այս մասին անհրաժեշտ է մի ուղղում մտցնել: Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» առաջին հրատարակիչ, թուրք գրականագետ և պատմագիր Նեշիր Ասըմը էվլիյա Չելեբիին ծագումով արաբա է համարում: Ուսումնասիրությունները շեն հաստատում այդ քանի որ էվլիյան միայն մոր կողմից կապ ունի արաբա ցեղի հետ: Տես Ջաֆեր Էրկոլլիի նշված աշխատության 6-րդ էջը:

է նրա «Ուղեգրութիւն»-ից: Այստեղ նա առանձին ուշագրութիւն է դարձրել և կենդանի դուլներով նկարագրել է ճարտարապետական տարրեր կառուցներն ու պատմական հուշարձանները: Էվ. Չելերին անտարբեր չի մնացել նաև արվեստի և գրականութեան նկատմամբ. նա ծանոթ է եղել թուրք և պարսիկ բանաստեղծների երկերին (Ֆուզուլի, Բաքի Ռուֆի, Նեշաթի և այլն):

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, Էվլիյա Չելերին առանձնապես մեծ սեր և հակում է դրսևորել դեպի աշխարհագրութիւնն ու երկրագիտութիւնը: Դեռևս վաղ հասակից ձգտել է ճանապարհորդել, ծանոթանալ տարբեր երկրների ժողովուրդների լեզվին, կուլտուրային, կենցաղին ու սովորութիւններին:

Դեռևս 1041 թվականին (1631), 21 տարեկան հասակում, Չելերին սկսում է շրջագայել Կոստանդնուպոլսում և նրա շրջակայքում: Մոտ ինը տարի տևող այդ շրջագայութիւնների և ուսումնասիրութիւնների արդյունքը եղավ նրա «Ուղեգրութեան» առաջին հատորը, որը խիստ արժեքավոր նյութեր ու փաստեր է բովանդակում Կոստանդնուպոլսի մասին: Էվլիյա Չելերին հետագայում, փոքր ընդմիջումներով, շուրջ 41 տարի շարունակում է իր ուղևորութիւնները: Էվլիյա Չելերին 16 երթուղիներով իր ուղևորութեանը կատարել է մերթ իբրև հոգևորական՝ իմամ կամ մյուսզզին, մերթ իբրև բարձրաստիճան անձանց ուղեկցող զրուցակից, անձնական քարտուղար, իսկ երբեմն էլ իբրև տուրքեր հավաքողի քարտուղար, խորհրդական, բանակի իմամ կամ մյուսզզին, հիվանդապահ, սուրհանդակ, ռազմիկ և այլն:

Նա եղել է Փոքր Ասիայում, Հայաստանում, Քուրդիստանում, Կովկասում, Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում, Արաբիայում, Եգիպտոսում, Հաբեշստանում, Բալկանյան երկրներում, Հարավային Ռուսաստանում, Ղրիմում, Կիչաքի դաշտում, Գերմանիայում, Դանիայում, Հոլանդիայում և Լեհաստանում:

Էվ. Չելերին մի քանի անգամ ճանապարհորդել է Անատոլիա և Հայաստան, անցնելով դրանց բոլոր կարևոր քաղաքներից ու գյուղերից: Վերջին ուղևորութիւնը նա կատարել է 1089 թվականին (1678): Ենթադրվում է, որ նա մեռել է այդ ուղևորութեանից հետո, 1090 թվականին (1679), մոտ 70 տարեկան հասակում:

Անհրաժեշտ է նշել, որ Էվլիյա Չելերին իր ստացած կրթութեան, շրջապատի պայմանների բերումով եղել է ջերմ հավատացյալ մուսուլման և կրոնական ավանդութիւնների և առասպելների խիստ սիրահար: Նրա բոլոր հատորներում հիշատակված են բազմաթիվ սուրբեր, սրբավայրեր, նրանց հրաշագործութիւնների վե-

բարերյալ երբեմն անհեթեթության հասնող սնոտիապաշտական նկարագրություններ:

Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» առաջին հրատարակիչ Նեջիբ Ասրմը գրքի առաջաբանում նշում է. «Արտակարգ առասպելներին և ավանդություններին հավատացող, նախնիներից մնացած առասպելներ և պատմվածքներ պատմելու սիրահար Էվլիյա Չելեբին, չնայած իր երկասիրություններում չափազանցություններ է արել, սակայն մոտիկից շփվելով իր ճանապարհորդած երկրների ժողովուրդների հետ, ուսումնասիրել է նրանց բարոյագիտությունն ու սովորությունները և այդ բոլորն արտահայտել իր երկերում: Առավելապես կարևոր են Ստամբուլի մասին նրա տված տեղեկությունները¹: Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ կարևոր տեղ են բռնում նաև պատմական դեպքերը, որոնց մեծ մասին ինքը ժամանակակից է: Նա ականատես և նույնիսկ մասնակից է եղել այդ դեպքերից շատերին. օրինակ, Զելալիների հարձակումները մինչև Սկյուդար (Ստամբուլ), Բիթլիսի հայտնի քուրդ Աբդալ խանի ապստամբական շարժումները և այլն, որոնք նկարագրված են կենդանի գույներով և մանրամասնությամբ: Էվլիյա Չելեբիի առաջին հատորում առանձնապես կարևոր են՝ 1) Կոստանդնուպոլսի բազմաթիվ շինությունների, հուշարձանների նկարագրությունը, 2) Սուլթան Սուլեյման Կանունիի վարչական, զինվորական օրենսդրությունները և միջոցառումները՝ անհրաժեշտ թվական տվյալներով, 3) սուլթան Մուրադ 4-րդի ֆերմանով կատարված աշխարհահամարը և Ատամբուլում կազմակերպված հսկա և հետաքրքիր շքերթը (ալայ), որին մասնակցել են քաղաքի զինվորական, վարչական, հոգևորական, առևտրական, արհեստավորական և բոլոր այլ էսնաֆները, սկսած պետության բարձր դասերից վերջացրած ժողովրդական հասարակ խավերով: «Ուղեգրության» առաջին հատորում այդ մեծ շքերթի նկարագրությունը բռնում է 150 էջ (արաբական տառերով)²:

Սովետական արևելագետներից Էվլիյա Չելեբիի ուսումնասիրությամբ զբաղվել են գլխավորապես Ի. Կրաչկովսկին և Վ. Բար-

¹ اوليا چلبی سیاحتنامہءسی، مقدمہءدن

² Կոստանդնուպոլսի XVII դարի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար այդ շքերթի նկարագրությունը խիստ արժեքավոր սկզբնաղբյուր է: Նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, որ քաղաքում կարևոր թիվ էին կազմում հայ արհեստավորները, առևտրականները և այլ աշխատանքներով զբաղվողները:

թուղը: Ի. Կրաչկովսկին այսպես է բնութագրում նրան. «Էվլիյա Չելեբիի տասը հատորով աշխատությունը հուշերի բնույթով իր դարաշրջանին հատուկ կարևոր փաստաթղթերից է, առաջնակարգ աղբյուր այդ ժամանակի պատմության համար. միաժամանակ միևնույն աստիճանի կարևոր նկարագրություն, որը միակն է Արեւելյան գրականության մեջ, ամեն տեսակի կուլտուր-պատմական ուսումնասիրությունների անսպառ աղբյուր»¹: Իսկ ակադեմիկոս Վ. Բարթոլդը նրա մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը» թուրքերեն լեզվով ինքնատիպ աշխարհագրական աշխատություն է, որը հարուստ է բազմաթիվ նյութերով (աշխարհագրական, ազգագրական և լեզվագիտական) և իրենից շատ ետ է թողնում արաբական՝ դասական աշխարհագրագետների աշխատությունները, թեև մյուս կողմից, պարզ ասած, բովանդակում է բազմաթիվ մտացածին տարրեր»²:

Էվլիյա Չելեբիի աշխատությունները հանգամանորեն ուսումնասիրել են նաև եվրոպացի մի շարք թուրքաբան-արևելագետներ (Մոբդեմանը, Թեյները, Հարթմանը և ուրիշներ):

Ի. Կրաչկովսկին նշում է Հարթմանի կողմից շեշտված մի կարևոր պատմա-հնագիտական փաստ: Էվլիյա Չելեբին XVII դարում հատուկ ուշադրություն է դարձրել Վերին Միջագետքի և Փոքր Ասիայի խալդեական հնություններին, մի հարց, որն սկսեց մեծ դեր խաղալ XX դարի եվրոպական գիտության մեջ և մասնավորապես մեր երկրում: Նրան ոչ պակաս զարմացրել են ժայռային ճարտարապետության այն հուշարձանները, որոնք նոր ժամանակների ուղեւորների համար անլուծելի հանելուկներ են թվացել: Նրա ուշադրությունը գրավել են նաև յուրահատուկ ծագում տվեցող թունելները, կամուրջները և կամարները, որոնք հազվագյուտ չեն այս երկրներում:

Իբրև օրինակ կարող ենք հիշատակել Վանի ժայռի (բերդի) և Բիթլիսից մինչև Վանի լիճը հասնող քարաշեն կամարների³ նկարագրությունը:

¹ Крачковский, стр. 607.

² В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России. СПб, 1911, Л., 1925.

³ Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» մեջ (հատ. 4, էջ 161—188) Վանի բերդի նկարագրությունը բռնում է 27 էջ. այդ բերդը և նրա քարաժայռի բնական և արհեստական քարայրները, բերդի պատմական և ուղեգրական նշանակությունը մեծապես հետաքրքրել են նրան: Նա շրջագայել, մեծ հետաքրքրությամբ դիտել և նկարագրել է բերդի բոլոր մասերը: «Վանի ժայռի գովքը» վերնագրով հատվածում

Ի. Կրակովսկին նշելով նրա կրոնասիրական հակումները, ասում է. «Իր միջավայրի և դարաշրջանի համար միանգամայն բնական է, որ էվլիյա Չելեբին հատուկ ուշադրությամբ կանգ է առել իր այցելած երկրների կրոնների, պաշտամունքների և սովորությունների վրա: Գյուղերը նկարագրելիս նա միշտ նշումներ է արել թե նրանց բնակիչները արդյոք մուսուլմաններ են, քրիստոնյաներ թե՞ հայեր: Քաղաքները նկարագրելիս նա հանգամանորեն կանգ է առնում ուխտատեղիների վրա, այդ առթիվ պատմում սրբերի հրաշքների և սրբավայրերի ուժի մասին... երբեմն ոչ պակաս ուշադրություն դարձնելով նաև քրիստոնեական կրոնական սովորություններին: Չելեբիի արժանիքը պետք է համարել այն փաստը, որ նրան հետաքրքրում են մեծ մասամբ ոչ թե վերին դասերի պաշտոնական կրոնը, ուրիշ նա շատ լավ ծանոթ է, այլ ժողովրդական լայն մասսաների կրոնական պատկերացումները»¹:

Իբրև օրինակ հիշենք էջմիածնի (Ուլ-Քելիսե) կրոնական արարողությունները, մասնավորապես մեռնողների, ժողովրդական լայն մասսաների մասնակցությունը Մշո սուրբ Կարապետի վանքի ուխտադեմքությանը, զոհաբերությունները, աղոթքները և բժշկությունները, վանի վարազա վանքի և Աղթամարի նկարագրությունները և այլն, և այլն:

Հեղինակը բերդը նմանեցնում է սրբաբնակավայրի և ծոված ուղտի, որի դեպի արևելք երկարած գլուխը թնդանոթի ազդեցությունից ազատ ժայռեր են... Բերդի ժայռերը տարբեր կողմերից շատ տարօրինակ են երևում, շատ տեղերում դրանք աժդահայի են նման: Ուղեգիրն ասում է, որ ժայռի քարայրներում կան բազմաթիվ արհեստանոցներ, քարայրներից շատերը լի են ամեն տեսակի ռազմամթերքներով և սննդամթերքներով... Քարայրներից մեկում, Աստծո հրամանով նավթի յուղ կա, որը ժայռից հոսում է մեծ ավազանի մեջ: Երբ ավազանը լցվում է նավթով վանի գեֆթերդարի միջոցով կառավարությունը ծախում է վաճառականներին: Ներքին բերդի մասին խոսելիս, էվլ. Չելեբին ասում է. «Ներքին բերդի դեպի քաղաք նայող հարավ-արևելյան մասում, Քեփ-թոփա կոչված քարայրի վրա, բարձր մի ժայռի կրճերին, ժայռը քառանկյունի ձևով հղկել-փայլեցրել և այդ քարի վրա մի քանի տող կարևոր գրքեր են գրել, որոնք տարբեր նշաններից և պատկերներից կազմված լինելու պատճառով նվազապես չկարողացավ կարդալ: Բիթլիսից վան ուղևորվելիս էվլ. Չելեբին հիշում է Խճարե փաշա խանից մինչև վանի լիճը և Խանից մինչև Բիթլիս, երեք ժամվա ճանապարհի վրա կառուցված կամարները սորպեսզի ձմռանը բոլոր ճանապարհորդները, վաճառականները և ուխտադեմքները այս կամարի տակով ուղևորվեն, որպեսզի ձմռանը նրանց համար տաք լինի, իսկ ամռան՝ զով...» Ամրոցը 8 ամսվա ընթացքում այս դաշտը ծածկված է լինում մինարեի բարձրության ձյունով...»: էվլ. Չելեբին ասում է, որ «ներկայումս այդ կամարի շատ մասերը քանդված են, սակայն այդ կառուցումի հետքերն ու որոշ մասերը պահպանվել են»:

¹ Крачковски И, стр. 630—631 (ընդգծումը մերն է—Ա. Ս.):

Մի շարք հեղինակներ էվլիյա Չելեբիի և հայտնի ճանապարհորդ Իրն-Բաթուկայի միշտ գաղափարների և տեսակետների որոշ մերձավորությունն են գտնում: Այդ ամենից ավելի արտահայտվում է այն բանով, որ «Նրա շահագրգռության կենտրոնում գտնվում է մարդը»¹:

Այժմ մի քանի խոսք էվլիյա Չելեբիի «Ուղեգրության» տպագրության և թարգմանության մասին:

Եթե Քյաթիր Չելեբիի երկերը նրա մահվանից հետո շուտով տպագրվեցին և ճանաչվեցին եվրոպական և արևելյան գիտական շրջաններում, ապա էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը» իր հայրենիքում 200 տարի շարունակ անուշադրության մատնվեց և մինչև XIX դարի վերջը պահվեց ձեռագիր վիճակում: Սակայն թուրքերից առաջ եվրոպացի արևելագետները էվ. Չելեբիի աշխատության ձեռագիր հատորները թարգմանեցին և տպագրեցին: Այսպես, ավստրիացի արևելագետ Համմերը, 1834—1850 թվականներին Ասիական Արքունական ընկերության ձեռագրի հիման վրա անգլերեն թարգմանեց և հրատարակեց էվ. Չելեբիի «Ուղեգրության» I և II հատորները: Դրանից մոտ մեկ դար հետո, հունգարերեն լեզվով թարգմանվեց VI հատորը, որը մեծ մասամբ վերաբերում էր Հոնգարիային: Մյուս հատորներից եվրոպական լեզուներով թարգմանվեցին միայն որոշ հատվածներ: Մինչև անցյալ դարի վերջը Ատամբուլում և Եգիպտոսում, «Ուղեգրության» 10 հատորներից թուրքերեն միայն առանձին հատվածներ են հրատարակվել:

Միայն 1896—1900 թվականներին թուրք պատմագիր-գրականագետ Նեշիր Ասըմի և Ահմեդ Ջեդեթի նախաձեռնությամբ, Ստամբուլում պահված ձեռագրի հիման վրա տպագրվեցին էվ. Չելեբիի «Ուղեգրության» I—VI հատորները: Դրանից մոտ 30 տարի անց, 1929 թվականին «Օսմանյան պատմության էնչլումենի» նախաձեռնությամբ VII և VIII հատորները, իսկ 1938 թվականին՝ IX և X հատորները՝ նոր թուրքական տառերով:

Այս «խայտառղետ» հրատարակություններն ունեն մեծ թերություններ: I—VI հատորների հրատարակիչները միջոցներ և հնարավորություններ չեն ունեցել ձեռք բերել և օգտվել էվլիյա Չելեբիի աշխատության տարրեր վայրերում պահված ձեռագիր օրինականներից, իսկ համիդյան ռեժիմի գրաքննությունը խիստ աղճատել է «Ուղեգրության» առաջին վեց հատորները:

¹ Крачковский, стр. 630—631.

Վերջերս Ռեշադ էքրեմ Կոչուն կրճատված ձևով հրատարակեց էվլիյա Չելեբիի «Ուղեգրությունը»¹:

Անբավարար վիճակում են նաև Չելեբիի մասին թուրքերեն լեզվով եղած ուսումնասիրությունները, ինչպես իրավամբ նշում են Ա. Տվերիտինովան և Ա. Դ. Ժելտյակովը, «էվլիյա Չելեբիի կարևոր աշխատությունը դեռևս լքիվ և բազմակողմանիորեն չի ուսումնասիրված, քանի որ չկա «Ուղեգրության» գիտական և լրիվ հրատարակված տեքստը, գիտա-հետազոտական մենագրություններ, որոնք ընդգրկեն աշխատության մեջ արժարժված բազմաթիվ հարցերը, չկան լրիվ հրատարակություններ եվրոպական լեզուներով»²:

Թուրքիայում վատ է կազմակերպված էվլիյա Չելեբիի ուսումնասիրության ու ժողովրդականացման գործը:

Նկատի ունենալով, որ էվ. Չելեբիի «Ուղեգրության» հատորներում շատ հարուստ տեղեկություններ և նյութեր կան նաև ՍՍՌՄ տարրեր երկրամասերի և ժողովուրդների մասին, ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտը (նախկին արևելագիտության ինստիտուտ) սկսել է էվլիյա Չելեբիից թարգմանել և հրատարակել Սովետական Միության ժողովուրդներին վերաբերող նյութերը: Վերջերս, անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջաբանով և հավելվածով հրատարակվեցին Մուղավիային և Ուլրախիային վերաբերող նյութերը:

Թարգմանության խմբագիրները նշում են այս կարևոր նախաձեռնության մասին. «էվ. Չելեբիի «Ուղեգրությունը», որն ընդգրկում է պատմության և ազգագրության վերաբերյալ բովանդակալից հարցեր, կարելի է համարել ամենից ավելի արժեքավոր օտար աղբյուրը ՍՍՌՄ-ի ժողովուրդների անցյալը ուսումնասիրելու համար. էվլիյա Չելեբիի հաղորդած անթիվ և բազմազան փաստական նյութերը այդ աշխատությունը («Ուղեգրությունը»—Ա. Ա.) դարձնում են կարևոր աղբյուր, նրա տեսած և նկարագրած երկրների ուսումնասիրության համար»²:

Անհրաժեշտ ենք համարում նաև մի քանի խոսք ասել է. Չելեբիի դասակարգային պատկանելիության, գաղափարախոսության հայացքների և հասարակական որոշ երևույթների հանդեպ նրա վերաբերմունքի մասին:

¹ Эвлия Челеби, Книга путешествия. Выпуск I. Москва, 1961, Предисловия—А. С. Тверитинова и А. А. Жельтяков, стр. 6.

² Эвлия Челеби, նշվ. աշխ., էջ 9, 11.

Էվլիյա Չելեբին, ինչպես նշեցինք նրա կենսագրության մեջ. պալտկանելով Թուրքիայի ռազմա-ֆեոդալական վերնախավին, ապրել և գործել է այդ միջավայրում: Նա հավատացյալ է և մուհ-ռանդ մուսուլման, «նվիրական իսլամի» նկատմամբ, «անհավատ-ներին» (քյաֆիրներին) թշնամի: Օսմանյան ռազմա-ֆեոդալական կարգերը, օսմանյան բանակի դեպի Արևելք և Արևմուտք կատարած արշավանքները, հրով ու սրով, արյունով և կոտորածներով նվա-ճումները, ֆեոդալական վերնախավի և բանակի հարստության գլխավոր աղբյուրը հանդիսացող ավարառությունները նա համա-րում է «օրինական»... ինչպես պարզվում է իր իսկ գրի առած և հաղորդած նյութերից, նա հաճախ մասնակցել է օսմանյան բա-նակի «հաղթական» արշավանքներին, կողոպուտներին և թալան-ներին, որոնց մասին խոսում է շատ պատկերավոր և «անկեղծու-թյամբ»:

Այդպիսին է եղել մեծ ճանապարհորդի հասարակական և քա-րոյական դեմքը:

* * *

Հոգվածի սկզբում մենք նշեցինք, որ միջնադարի երկու թուրք հեղինակներ Քյաթիր Չելեբիի և Էվլիյա Չելեբիի երկասիրությունն-ները կարևոր աղբյուրներ են նաև Հայաստանի, հայերի և Անդրկով-կասյան մյուս ժողովուրդների միջնադարյան պատմությունը ու-սումնասիրելու համար, քանի որ դրանք շատ հարուստ և արժեքա-վոր տեղեկություններ են տալիս այդ ժողովուրդների սոցիալ-տըն-տեսական կյանքի, պատմության, աշխարհագրության, ազգագրու-թյան, կուլտուր-կենցաղային պայմանների վերաբերյալ:

Նկատի առնելով հոգվածի սահմանափակ ծավալը, մենք կբա-վականանք այդ մասին ամփոփ տեղեկություններ հաղորդելով¹:

Երկու թուրք հեղինակների երկերի մասին տված անհրաժեշտ բացատրությունները և զնահատականը հավասարապես վերաբե-րում են նաև Հայաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին:

Քյաթիր Չելեբին իր հայտնի «Ջիհան նյումա»-ում, ի թիվս այլ երկրների, տալիս է նաև Հայաստանի, նրա խոսքերով ասած Մեծ

¹ Երկու թուրք հեղինակների մասին մեր ուսումնասիրությունները ամփոփել ենք առանձին աշխատություններում՝ Քյաթիր Չելեբիի Հայաստանի և Անդրկով-կասի միջնադարի աշխարհագրությանը վերաբերող նյութերը «Թուրքական աղբյուր-ները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» մեր աշ-խատության 2-րդ հատորում. Էվլիյա Չելեբիի 1—V հատորներից մենք քաղել ու թարգմանել ենք Հայաստանի և Անդրկովկասի մասին եղած բոլոր նյութերը, կաղ-մելով առանձին գիրք, որը պատրաստ է տպագրության:

Հայաստանի և Փոքր Հայաստանի, (ինչպես նաև Անդրկովկասի) աշխարհագրությունը՝ պատմական և տեղագրական բազմաթիվ հարուստ ծանոթագրություններով:

«Ջիհան նյումա»-ում Հայաստանի և Անդրկովկասի աշխարհագրությունը տրված է հետևյալ պլանով.

1. Արանի, Մուզանի և Շիրվանի երկրները.

2. Վրաստանի երկրները.

3. Կարսի էյալեթը.

4. Հայաստանի երկրները.

ա) Վանի էյալեթը.

բ) Հեքարին.

գ) էրզրումի էյալեթը.

5. Տրապիզոնի էյալեթը.

6. Դիարբեքիրի էյալեթը.

7. Մարաշի և Ադանայի էյալեթները.

8. Սվադի էյալեթը:

Այս պլանավորման ժամանակ հեղինակը հավանաբար հիմք է ընդունել XVI—XVII դարերում Թուրքիայի վարչական բաժանումը²:

Հասկանալի է, որ Քյաթիբ Չելեբիի և առհասարակ Արևելքի միջնադարյան աշխարհագրությունը չպետք է պատկերացնել ներկա աշխարհագրական գիտության հիմունքներով, քանի որ դա պատմա-աշխարհագրական և այլ տեղեկություններ պարունակող, նկարագրական բնույթի «աշխարհագրություն» է: Մեր կարծիքով, հեղինակը իրավացիորեն այն անվանել է «Ջիհան նյումա», այսինքն՝ «Աշխարհի հայելի»:

Ավելի հստակ պատկերացում տալու համար կարելի է իբրև օրինակ բերել Երևան քաղաքի և հարակից մասերի աշխարհագրության մասին եղած տեղեկությունները:

«Երևան (روان)՝ 87 աստիճան երկարության և 39 աստիճան լայնության միջև, Չուկուր-Սաադ (چوقور سعد) կոչված երկրի քաղաքն ու կենտրոնն է: Ջանգի գետը, գտնվում է պարսպի կողքին, որը հոսում է արևմուտքից: Հարթավայրում Ջանդիին գետահայաց հողաշեն մի բերդ կա, ունի երկու դուռ, հյուսիսում՝ Դեռվազեի Թավրիզը, հարավում՝ Բաբը Շիրվանը:

¹ بويوك ارمنيہ، كوچوك ارمنيہ

² Տե՛ս «Արևելագիտական ժողովածու»-ի 1-ին գրքում (Երևան, 1960) մեր հոդվածը՝ «Մոմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ.», էջ 285—301:

Շրջակայքում շատ են այգիներն ու պարտեզները, հացահատիկի և պտուղների վայր է. (քաղաքում) կա մի մզկիթ և գետահայաց մի պալատ....

Համառոտակի հիշելով թուրքերի և պարսիկների միջև Երևանի համար մղված պայքարը, հեղինակը շարունակում է. «Ներկայումս [Երևանը] կըզլրաշենքի ձեռքում բերքառատ մի վիլայեթ է: Աղբը լեռը (Արարատ) Երևանի հարավ-արևմուտքում մեկ օրագնաց (մերհեկ) հեռավորության վրա հսկա մի լեռ է, որը տեսանելի է մի քանի օրագնաց հեռվից: [Լեռը] կեսից դեպի վեր ծածկված է մշտական ձյունով. այդ կլորած լեռն տնի մի քանի մենդիլ շրջապատ: Նրանից դեպի արևելք և հյուսիս Արաքս գետը հոսում է դեպի արևելք և հյուսիս: Ալաշկերտի դաշտն ընկած է գետի և լեռան միջև: Մեկ կողմումն էլ Չաղդրաճի դաշտն է, այդ պատճառով էլ (լեռան) հյուսիսային կողմը կոչվում է Չըլդրի էլայեթը...»¹:

Մոտավորապես այս բովանդակությամբ և պատմական կարևոր դեպքերի հիշատակումով է տրված Հայաստանի և Անդրկովկասի տարբեր մասերի աշխարհագրությունը: Քյաթիր Չելեբին «Աշխարհի հայելի» նյութերը քաղել է մինչև XVII դարը գոյություն ունեցող արաբական, պարսկական, թուրքական, որոշ շափով նաև արևմտյան աղբյուրներից: Մեր կարծիքով, Քյաթիր Չելեբի աշխատությունը հատկապես գնահատելի է այն տեսակետից, որ դրանում ի մի են բերված բազմաթիվ աղբյուրներում ցրված տեղեկությունները:

Քյաթիր Չելեբին և էվլիյա Չելեբին իրենց աշխատությունների համապատասխան հատվածներում առանձին ուշադրություն են դարձրել նաև իրենց նկարագրած քաղաքների և երկրամասերի հաղորդակցության ճանապարհների, դրանց ուղղությունների, հեռավորության նշանակության հարցերին: Այդ քարավանային ճանապարհները, որոնցից մի քանիսն ունեցել են տարանցիկ-առևտրական, հաճախ նաև ռազմական մեծ նշանակություն, Մերձավոր արևելքի երկրների միջև առևտրական և այլ հարաբերությունների տեսակետից մինչև օրս էլ պահպանում են իրենց կարևորությունը:

Այդպիսին են եղել Սև ծովի եզերքից (Տրապիզոն նավահանգիստ) էրզրում ու մինչև Թավրիզ ձգվող մեծ ճանապարհը, Կենտրոնական Անատոլիայից Սիրիա-Միջագետք, Սվադից Մալաթիա, Կիլիկիայից դեպի Միջերկրական ծով տանող ճանապարհները և այլն:

¹ كاتب چلبی، جهان نما، فصل ۲۹

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր ուսումնասիրած երկու թուրք հեղինակները, հիտկապես Հայաստանին և Անդրկովկասին վերաբերող շատ հարցերում, լրացնում են միմյանց: Քյաթիբ Չելեբին բազմաթիվ աղբյուրներից (զլխավորապես իսլամական) հավաքած և որոշ պլանով դասավորված պատմա-աշխարհագրական նյութերով և տեղեկություններով, էվլիյա Չելեբին՝ իր ուղևորությունների ընթացքում և մեծ մասամբ իր անձնական դիտումների և ուսումնասիրությունների շնորհիվ հավաքած բազմազան նյութերով, նկարագրություններով և փաստերով, հարուստ և հետաքրքիր այնպիսի աշխատություններ են թողել, որոնք ինչպես նշում են սովետական և ավրոպացի արևելագետ-թուրքաբանները, անսպառ աղբյուր են Մեհմեդ արևելի, գուցե ավելի մեծ չափով, Արևմտյան և Արևելյան Հայաստանի և ամբողջ Կովկասի ժողովուրդների կյանքի բազմակողմանի ուսումնասիրության համար: Անհրաժեշտ է շեշտել, որ մեծ ճանապարհորդ էվլիյա Չելեբին Հայաստանի, Անդրկովկասի տերիտորիաներում ճանապարհորդելիս իր տեսածները և ուսումնասիրությունները նոթագրել է ուղևորության ձևով: Հիշենք նրա Հայաստանում կատարած ուղևորությունների կարևոր երթուղիները: 1050 թ. (1640) նա Անատոլիայով ուղևորվում է էրզրում, այնտեղից անցնում Թավրիզ, հետո Երևան, Բաքու, Շամախի, որտեղից երկրորդ անգամ դեպի Վրաստան: Այստեղից նա Ախալցխեով նորից գնում է էրզրում և վերադառնում Ստամբուլ (2-րդ հատոր):

1058 թ. (1648) էվ. Չելեբին արևմտյան և կենտրոնական Անատոլիայի վրայով գնում է Պադեստին (Սուրբ երկիր), հետո Դամասկոսից ուղևորվում է Սվադ, Հալեպ, Ուրֆա, Մարաշ, Կեսարիա (3-րդ հատոր):

1065 թ. (1654) նա Սկյուտարից ուղևորվում է վերցնում դեպի Վան, այսինքն կտրում անցնում բովանդակ Անատոլիան, հատկապես կանգ առնելով Վան քաղաքի, նրա բերդի, Վանի լճի շրջակայքում, ապա Վանից մեկնում է Պարսկաստան:

1066 թ. (1655) էվ. Չելեբին ճամփորդում է Քուրդիստանում, որտեղից նորից անցնում է Վան, այստեղից Բիթլիս և Արճէշի ու Ադիլջևազի (Արծկե) ուղևորվածք՝ էրզրում:

Այսպիսով, էվ. Չելեբին 16 տարվա ընթացքում տարբեր երթուղիներով ճանապարհորդում է Հայաստանում, Անդրկովկասում, Իրանական Ադրբեջանում և Կիլիկիայում: Այդ հսկայական տարածության վրա նա կանգ է առնում բոլոր կարևոր քաղաքներում — Երևան, Թիֆլիս, Գյանջա, Բաքու, Թավրիզ, էրզրում, Երզնկա,

Սվաղ, Կեսարիա, Ամասիա, Թոկատ, Մարաշ, Ադանա և այլն: Նա չի բավականանում միայն մեծ քաղաքներով, այլ կանգ է առնում նաև իր երթուղու բազմաթիվ փոքր քաղաքներում, գավառական կենտրոններում, հաճախ գյուղերում:

Հայ և հարևան ժողովուրդների միջնադարի պատմական-աշխարհագրական, ազգագրական, լեզվագիտական, կուլտուր-կենցաղային և սոցիալ-տնտեսական ուսումնասիրության համար էվլիյա Չելեբիի տված բազմազան և արժեքավոր նյութեր դեռևս անհրաժեշտ չափով ուսումնասիրված չեն:

А. Х. САФРАСТЯН

ПРЕДСТАВИТЕЛИ ТУРЕЦКОЙ МЫСЛИ XVII ВЕКА КЯТИБ ЧЕЛЕБИ И ЭВЛИЯ ЧЕЛЕБИ

Резюме

В статье излагается жизнь и научно-литературная деятельность двух представителей турецкой мысли XVII в.—Кятиб Челеби и Эвлия Челеби.

Кятиб Челеби (Гаджи-Халиф)—турецкий историограф и географ, который в своих многочисленных трудах осветил важные события истории Османской империи XVI—XVII вв.

Эвлия Челеби — турецкий путешественник, историограф и географ, известен как «путешественник мира». В течение четырех десятилетий он путешествовал по многим странам мира, побывал в Малой Азии, на Кавказе, в Армении, Месопотамии, Сирии, Палестине, Египте, на Балканах, в Восточной и Южной Европе. В своем десятитомном труде Эвлия Челеби приводит много интересных и ценных сведений о социально-экономической, культурно-бытовой, лингвистической, археологической жизни народов этих стран.

В трудах Кятиб Челеби и Эвлия Челеби содержится также богатый материал и много сведений, касающихся географии Армении XVII в. и истории армянского народа.